

ՀՏԴ 81՝04

Հայոց լեզու

Նոանե ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Հայ բանասիրության ֆակուլտետ, հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ

E-mail: nranesargsyan@gmail.com

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ԲՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)

Հոդվածում անդրադարձ է կատարվում պատճառական բայերի բուն հրամայականով խոնարհման համակարգում միջին հայերենի և արևմտահայերենի լեզվական համակարգերի միջև եղած ընդհանրությունների, կատարված փոփոխությունների, առկա կապի բացահայտմանն ու ուսումնասիրմանը:

Գրաբար-միջին հայերեն-արևմտահայերեն խոնարհման համակարգ դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ արևմտահայերենը շատ իրողություններ ժառանգել է միջին հայերենից: Նշվում է, որ արևմտահայերենում պատճառական բայերի բուն հրամայականը կազմող **-ուր** վերջավորությունը ձևավորվել և արևմտահայերենին է փոխանցվել միջին հայերենում: Այս վերջավորությունը առաջացել և կիրառություն է ստացել դեռևս վաղ միջին հայերենի շրջանում, որտեղ գրաբարյան **-ո** վերջավորությունը աստիճանաբար վերածվում էր հնաբանության: **Ո>ու>ուր** անցումը բայական համակարգի տրամաբանական զարգացման արտահայտությունն է, ընդ որում՝ նշվում է, որ ր հնչյունի հավելումը կատարվել է արգելյական հրամայականի ր հնչյունի համաբանությամբ:

Պատճառական բայերի բուն հրամայականի հոգնակին արևմտահայերենում կազմվում է **-եք** վերջավորությամբ: Այս վերջավորության ամրակայումն ու կրավորաձև կամ ներգործաձև խոնարհմամբ չպայմանավորված համընդհանուր

գործածությունը առաջ է եկել միջին հայերենում: Չրաբարում կրավորական սեռի բայերը ստանում էին **-այք, -արուք**, իսկ ներգործաձև խոնարհման բայերը՝ **-էք**: Միջին հայերենում այս տարբերակումը վերացավ, և բուն հրամայականի հոգնակին կազմող միակ վերջավորությունը դարձավ **-էք-ը**: Արևմտահայերենը ժառանգել և պահպանում է նաև հոգնակի թվի՝ անցյալ կատարյալի հիմքից կազմության սկզբունքը:

Բանալի բառեր՝ պատճառական բայեր, բուն հրամայական, փոխանցումներ, խոնարհում, արևմտահայերեն, միջին հայերեն:

Н. Саргсян

**СВЯЗИ СРЕДНЕАРМЯНСКОГО И
ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКОВ В СИСТЕМЕ
ПОВЕЛИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ КАУЗАТИВНОГО
ГЛАГОЛОВ**

В статье рассматриваются выявление и изучение существующей связи и изменения, общности языковых систем среднего армянского и западноармянского языков в системе повелительного наклонения каузативного глаголов. Рассматривая систему наклонения Грабар, средний армянский и западноармянский становится очевидно, что западноармянский унаследовал многое от среднего армянского. Отмечается, что окончание **-իր**, составляющее повелительное наклонение каузативных глаголов, было сформировано и передано западноармянскому языку в среднеармянском языке. Это окончание возникло и получило применение еще в период раннего среднего армянского языка, где грабарское окончание **-п** постепенно превращалось в археологию. Переход **p>pi>pir** является выражением логического развития глагольной системы, в то же время отмечается, что добавление звука **p** было выполнено в сочетании со звуком **p** отрицательного повелительного наклонения.

В западноармянском языке повелительное наклонения множественного числа составляется с окончанием **-էք**. Укрепление и повсеместное употребление этого окончания появилось в среднеармянском языке. Это применение больше не было обусловлено пассивным или активным наклонениям. В Грабаре пассивные глаголы были образованы с помощью **-իրք, -իրքիր**, а действительные **-էք**: В среднеармянском языке эта дифференциация исчезла, и единственным окончанием, составляющим множественное число повелительного наклонения, стал **-էք**. Западноармянский язык унаследовал и сохраняет также принцип формирования множественного числа из основ прошлого совершенного.

Ключевые слова: каузативные глаголы, повелительное наклонение, связи, наклонения, западноармянский язык, средний армянский язык.

N. Sargsyan

**MIDDLE ARMENIAN-WESTERN ARMENIAN
TRANSITIONS IN IMPERATIVE MODE OF CAUSATIVE
VERBS**

The article discusses the changes, identification and study of the existing connection, commonalities between the language systems of the Middle Armenian and Western Armenian languages in the system of imperative mode of causative verbs. Considering the conjugation system of Grabar-Middle Armenian and Western Armenian, it can be noted that Western Armenian inherited many realities from the Middle Armenian language. It is noted that the ending -նլի, which makes up the imperative mood of causative verbs, was formed and transmitted to the Western Armenian language in the Middle Armenian language. This ending originated and was used in the period of the early Middle Armenian language, where the Grabar ending -n gradually turned into archaeology. The transition $n > n_l > n_l i$ is an expression of the logical development of the verb system, at the same time, it is noted that the addition of sound n was performed in combination of sound l of negative imperative.

The plural form of imperative mode is formed with ending -լք in Western Armenian. Strengthening and universal use of this ending was appeared in the Middle Armenian language. This application was no longer conditioned by passive or active mode. The passive verbs were formed with -սլք, -սլռսլք, and the actives -լք in Grabar. This differentiation disappeared in the Middle Armenian language and the only ending that makes up the plural imperative mode became -լք. The Western Armenian language has inherited and also retains the principle of the formation of the plural from the foundations of the past perfect.

Key words: *causative verbs, imperative mode, transitions, conjugation, Middle Armenian, Western Armenian.*

Լեզվի զարգացման ողջ ընթացքում բայի խոնարհման համակարգը կառուցվածքային, իմաստային բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվում, ի հայտ են գալիս կազմության նոր միջոցներ: **Գրաբար-միջին հայերեն-արևմտահայերեն** խոնարհման համակարգը դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ զարգացման այս շրջայում արևմտահայերենը շատ իրողություններ ժառանգել է միջին հայերենից, որտեղ գրաբարյան ձևերը ենթարկվեցին փոփոխությունների: Այս երևույթը տեսանելի է անգամ խոնարհման համակարգի որևէ հատվածն ուսումնասիրելու դեպքում: Պատճառական բայերի բուն հրամայականով խոնարհումը ևս ցույց է տալիս, որ արդի արևմտահայերենում ամրակայվել են միջին հայերենում ձևավորված և առավել գործուն ձևերը: Նշված իրողությունը թեև վկայված է լեզվաբանական տարբեր աշխատություններում, բայց առանձին ուսումնասիրության չի արժանացել՝ ի հայտ բերելով **միջին հայերեն-արևմտահայերեն** լեզվական համակարգերի սերտ կապը:

Եզակի թիվ: Պատճառական բայերը արևմտահայերենում բուն հրամայականի եզակին կազմում են *-ուր* վերջավորությամբ: Հրամայականի կազմության այս վերջավորությունը արևմտահայերենին է փոխանցվել միջին հայերենից:

-Ուր ձևության գործածությունը նկատելի է վաղ միջին հայերենի շրջանից, որտեղ զուգահեռ կիրառվում էին նաև պատճառական բայերի գրաբարաձև կազմություններ: Գրաբարում այս բայերը հանդես էին գալիս *-ո* վերջավորությամբ, որն առաջանում էր պատճառական *-ուցան*-մասնիկից՝ նախ *-ան*- ածանցի անկման, ապա *-ոյց* ածանցի շեշտմամբ *յ, ց* հնչյունների դուրս ընկնելու արդյունքում, օրինակ՝ *ուսոյց-ուսո՛ւ, վագեցոյց-վագեցո՛ւ*: Ընդ որում՝ պատճառական դառնալիս մյուս լծորդությունների բայերը վերածվում են *ե* լծորդության և խոնարհվում *ե* լծորդության ածանցավոր բայերի օրինակով: Միջին հայերենի շրջանում հնաբանության վերածվող գրաբարյան այս ձևերը աստիճանաբար իրենց տեղը զիջում էին *-ուր* վերջավորությամբ նոր կազմություններին: Այս շրջանում *-ուր* վերջավորության ձևավորման և տարածման գործընթացը բայական համակարգի տրամաբանական զարգացման և փոփոխության արտահայտությունն է: *Ո>ու>ուր*¹ անցումը դիտարկելիս նշվում է, որ պատճառական բայերի բուն հրամայականի վերջում *ր* հնչյունի հավելումը պայմանավորված էր արգելական հրամայականի *ր* հնչյունի համաբանությամբ:

Ը հնչյունի հավելումը Մ. Աբեղյանը բացատրում է հնչյունների ավելացման հոգեբանական «անալոգիայով», «այն է՝ որոշ բառերի և բառաձևերի մեջ ավելանում է մի հնչյուն ուրիշ բառերի և բառաձևերի նմանությամբ և նույնիսկ միևնույն բառի մեջ եղած մի հնչյունի ազդեցությամբ»²: Հոգեբանական գործոնից գատ՝ ավելի մեծ դեր կարող են ունենալ «տվյալ լեզվական համակարգին բնորոշ հնչարտաբերական նորմաների միտումները»³:

-Ուր վերջավորությամբ կազմությունները շատ արագ տարածվեցին, թեև առաջին ենթաշրջանում զուգահեռ շարունակում էին կիրառվել գրաբարյան *-ո* վերջավորությամբ ձևերը: Հաճախ նույն հեղինակի երկերում երկու տարբերակն էլ կարելի է գտնել, ինչպես՝ Եւ ՚ի շքի **չորացուր**, և տուր աղցած և մաղած մի մթխալ՝ քաղցր նոան ջրով և խիարի ջրով անօթեց (ՄՀ, ՋՄ, էջ 43): Ջրով

¹ Ուր-ի առաջացման և ձևավորման հարցին անդրադառնալիս Յ. Կարստը գրում է, որ պատճառական բայերը կիլիկյան հայերենում ունենում են **ո** կամ **ոյ** վերջավորությունը, որը, սակայն, դասական լեզվի հետ սոսկ տառագրական նմանություն ունի, որովհետև հին **ո-օ** հնչյունը կիլիկյան հայերենում գնում է դեպի **ու** (ու): Այս **ո** վերջավորությամբ ձևի կողքին երևում է արդեն **ու** վերջավորությամբ ձևը, այնպես որ այդ դեպքում նոր հայերենի համար ընդհանուր **ո-օ>ու-ս** փոփոխությունն առկա է արդեն կիլիկյան հայերենում: Տե՛ս Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 317-318:

² Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 101:

³ Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 191:

եփէ. պարզէ, և սնուցած մանուշակով **քաղցրացո**. և ամեն օր սակաւ սակաւ խմել տուր (ՄՀ, ՋՄ, էջ 54): Հրամայականի՝ պատճառական բայերի -ուր վերջավորությունը համընդհանուր տարածում ստացավ միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում: Ուշ միջնադարի և վաղ աշխարհաբարի շրջաններում արևելյան բարբառներում կատարվեց նաև հնչյունների դրափոխություն, և պատճառական բայերի բուն հրամայականը սկսեց կազմվել -րու վերջավորությամբ: Կազմության այս ձևը ամրակայվեց արևելահայերենում, իսկ արևմտահայերենը մինչ օրս պահպանում է միջին հայերենում կիրառվող -ուր վերջավորությամբ տարբերակները (հմմտ. վազեցո՛ւր-վազեցրո՛ւ, խօսեցո՛ւր-խօսեցրո՛ւ և այլն):

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն:

Տես, որդեակ, մի մոռանար զսէր իմ, այլ շրթամբք քովք սիրով միշտ համբուրեալ զիս, եւ ի սենեակս մտաց քոց **բնակեցո** զիս (ՎԱ, ԳՀ, էջ 74): **Խաղացո՛** ջուր կենդանիդ **հ**ոստրս սրբտիս, վոր կակղանամ (ՖԺ, էջ 201): Վաստակէ՛ եւ **աճեցո՛**, որ վճարէ գտուողն աստուած (ԿԵ, էջ 151): Ապա ա՛ռ իւր կաթնէն. ՚ի յառաջին օրն տուր կէս լիտր, եւ հետէն **յաւելցուր** ի՛ կաթն ըստ ուժոյն հիւանդին (ՄՀ, ՋՄ, էջ 41-42):

Արևմտահայերեն:

Սորվեցո՛ւր զաւակներուդ պաշտպանել մեր ցեղի օրէնքները անգիր (Վ. Թեքեան)¹: Մի՛ կարդար **կորսնցո՛ւր**// **կորսնցո՛ւր** ձայնդ (ԳՊ, Մանտր., էջ 45): **Ծանօթացուր** ինծի քոյրդ, իմ կարգիս զայն ծանօթացնեմ բարեկամիս (ՄՊ, ԵԼԺ, էջ 45):

Կան նաև պատճառակերպ բայեր, որոնք թեև պատճառական ածանց չունեն, բայց խոնարհվում են այդ բայերի օրինակով՝ **հարցնել-հարցո՛ւր**, **ցուցնել-ցուցո՛ւր** և այլն: Այս կազմությունները գործածական են եղել նաև միջին հայերենում, ինչպես՝ Թէ՛ «Գնա՛, դու շատ մի ասել, // Գնա՛, **ցուցու** քո յազգէն, // Որ մեռել // ու դարձել ելել // ու դարձել ելել» (Հայրեններ)²: Հետ մի **ցուցու** զքո տեսդ աղվոր, // Հաւսար ծագէ յերկիր բոլոր (ԿԵ, էջ 120):

Հատկանշական է, որ **ցուցու՛ր** բայաձևի փոխարեն կիրառված է **ցուցու** տարբերակը: Հնարավոր է, որ **ր** հնչյունը մաշվել-ընկել է կամ տվյալ հեղինակի խոսքային առանձնահատկությունն է: Միջին հայերենում գտել ենք նաև հնչյունափոխված **ցըցուր/ցըցու** տարբերակը՝ **Արէկ գայս ալէմս ի ժուռ, բեր ցըցո՛ւ զէտ քեզ մէկ մի ալ** (Հայրեններ, էջ 39), որի գործածությունը նկատվում է նաև արդի արևմտահայերենում՝ Մամային քովէ՛ն գողցար // չէ՛ իմինիս է// **ցցո՛ւր** (ՔԲ, էջ 53):

¹ <http://www.grakanter.am/archives/11169>:

² Հայրեններ,

<https://digilib.aua.am/book/2350/2800/20970/%D5%80%D5%A1%D5%B5%D6%80%D5%A7%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>:

Հետաքրքիր դրսևորումներ ունի *գալ* բայը, որի հրամայականը ևս կազմվում է *-ուր* վերջավորությամբ: Գրաբարում *գալ* բայն ունեւ հրամայականի *ե՛կ* ձևը, որը, վաղ միջին հայերենի շրջանում միանալով *յառնել* բայի հրամայականի *արի՛* ձևին, հանդես էր գալիս *արիե՛կ*, *արե՛կ* տարբերակներով՝ *Հիւանդ եմ ի քո սիրու, ա՛ն խընձոր արե՛կ զիս ի տես*,// *Արե՛կ նի՛ստ ի բարձս ի վեր, ձեռքդ տա՛ր ու զիմ սիրտըն տե՛ս* (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 132): *Ի դէմս է՛ր մայր մտնես*:// *Արեկ աչերուս իմ լոյս* (ԿԵ, էջ 161):

Երկրորդ ենթաշրջանում բուն հրամայականը սկսեց կազմվել պատճառական բայերի օրինակով: Ի հայտ եկան *եկո՛ւ*, *եկո՛ւ*, ապա նաև *եկո՛ւր* տարբերակներ¹, որոնցից ամրակալվեց, ապա արևմտահայերենին փոխանցվեց *եկո՛ւր* բայաձևը, իսկ արևելահայերենը, ի տարբերություն արևմտահայերենի, պահպանեց գրաբարյան *ե՛կ* տարբերակը, թեև գործածական է նաև *արի՛* բայաձևը²:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն:

Եկու՛ տանելու ցուցնեմ, տանելու զըլլին զարնելու՛ (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 142): *Թէ վարդ ես նէ՛ վար եկո՛ւ, թէ՛ օտար ծաղիկ նա զընա՛* (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 134): *Եկո՛ւ քեզի նուռ մի տամ, կտրե՛ տե՛ս քանի՞ հատ ունի*:// Ամէն հատի պագ մի տուր, աւելին հարամ թէ պիտի (Ն. Քուչակ, ՀԲ, 198): *Եկո՛ւր, որ մէկ նաւ նըստինք*,//*Նաւն ի նաւ, ծովըն ի զընաց* (Հայրեններ, էջ 81): - *Եկո՛ւր նշանով ցոյց տամ, որ զըտնես դուռը խարիպիս* (Ակնա հայրեններ, ՀԲ, էջ 435):

Արևմտահայերեն:

Գրիգոր *եկուր* տոնտուրմա ուտելու երթանք (ՔԲ, էջ 53): - *Շաւարշ, եկո՛ւր նայէ, շո՛ւտ եկուր, կատուն չորս հատ ձագ բերեր է, ի՛նչ անուշիկ ձագեր ...* (ՄՊ, ԵԼԺ, էջ 289): - *Եկո՛ւր այդ բաներու արժանիքին մասին չլիճինք, մա՛նաւանդ որ այդ բոլորը քու պարտեզիդ ցանկապատէն անդին տեղի ունեցող փոփոխութիւններ են* (ԱՀ, ԱՕՄ, էջ 114):

Այսպիսով, կարող ենք ասել, որ պատճառական բայերի բուն հրամայականի եզակի թվի կազմության առանձնահատկությունները արևմտահայերենը ամբողջությամբ ժառանգել ու պահպանում է միջին հայերենից:

Հոգնակի թիվ: Արևմտահայերենում պատճառական բայերի հոգնակին բուն հրամայականում կազմվում է մնացած բայերի օրինակով՝ անցյալ կատարյալի հիմքին –*էք* վերջավորության ավելացմամբ: Կազմության այս սկզբունքը արևմտահայերենին նույնպես փոխանցվել է միջին հայերենից: Առհասարակ, եզակի թվի կազմության միջոցների հետ համեմատած՝ միջին հայերենում հոգնակի թիվը պարզեցվեց, և կազմության մեկ ձևությո՝ *-էք* ձևությո:

¹ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 350, 400:

² Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ *արի՛*, *արե՛ք* ձևերը բնորոշ են ժողովրդական լեզվին, տես՝ *Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2004, էջ 323:

Գրաբարում բուն հրամայականի հոգնակի թիվը կազմվում էր *-էք, -այք, -արուք* ձևությամբ: Այս ձևություններն ավելանում էին անցյալ կատարյալի հիմքին, որը, ըստ լծորդության և եղած ածանցների, կարող էր լինել արմատական և ցոյական: *-էք* ստանում էին ներգործաձև խոնարհման բայերը, իսկ կրավորաձև խոնարհվելիս բային ավելանում էին *-այք* և *-արուք* վերջավորությունները: Միջին հայերենում *-էք*-ը, ի տարբերություն գրաբարի, ավելանում էր բոլոր բայերին՝ անկախ սեռից: Պատճառն այն էր, որ միջին հայերենում կրավորաձև և ներգործաձև խոնարհման տարբերակումները վերացել էին: *-Այք* և *-արուք* ձևությունները այլևս չէին կիրառվում կրավորականության իմաստ արտահայտելու համար: Կորցնելով իրենց այդ հատկանիշը՝ միջին հայերենի առաջին ենթաշրջանում իրենց տեղը զիջեցին առավել կարճ ու շփոթ չառաջացնող տարբերակին՝ *-էք* ձևությամբ, քանի որ *-այք*-ը, լինելով նաև անցյալ կատարյալի հոգնակի երկրորդ դեմքի վերջավորություն, համանունություն էր առաջացնում բուն հրամայականի և անցյալ կատարյալի համապատասխան ձևերում, հմմտ. *հեռացայք* և *հեռացա՛յք*: Միջին հայերենում ընդհանուր առմամբ պահպանվեց գրաբարի՝ անցյալ կատարյալի հիմքին հոգնակերտ մասնիկի հավելմամբ հրամայականի հոգնակի թվի կազմության սկզբունքը:

Միջին հայերենի ուշ շրջանում *Ում* ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակների մոտ առկա են արմատական՝ ոչ ցոյական հիմքով կազմություններ՝ այն բայերի համար, որոնց անցյալ կատարյալի հիմքը ցոյական էր, ինչպես՝ *Յնծութեամբ և խնդութեամբ խմէ՛ք սիրով միաբա՛նական, // Եղբայրք պատուական (ՆՀՏ, էջ 76): Ա՛յ եղբայրք, կպէք գինոյ գաւէն, // Ասէք «Ա՛յ դարտաշ, իչտում սանայ» (ՆՀՏ, էջ 88)*: Այս կազմությունները լայն տարածում գտան արևելահայերենում, և այժմ էլ կիրառվում են ցոյական հիմքով կազմություններին զուգահեռ՝ հաճախ առավել մեծ գործածականություն ունենալով: Այսպիսի կազմությունները տարածում չգտան արևմտահայերենում: Այն, ի տարբերություն արևելահայերենի, պահպանել և մինչ օրս գործածում է *ե* և *ի* լծորդության բայերի հոգնակի թվի՝ ցոյական հիմքից կազմությունները:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն:

Ջաստուած առ ձեզ քաղցրացուցէք, // Յարքայութիւնն մխիթարուէք (Ա. Խարբերդցի)¹:

Արևմտահայերեն:

Միօրինակութենէ դուրս գալու մասին մտածեցէք, զարմացուցէք ձեր շրջապատը ...²: Արիւնները կը պոռա և// Լռեցուցէ՛ք եթէ կրնաք (Վ. Թեքեան)³:

¹ <https://digilib.aul.am/book/125/125/1230/%D5%8F%D5%A1%D5%B2%D5%A5%D6%80>:

² <https://www.aztagdaily.com/archives/468907>:

³ <https://granish.org/im-erkirs-tkhur-e/>:

Առկա փոփոխություններն ու ընդհանրությունները առավել ակնառու դարձնելու համար ներկայացնենք պատճառական բայերի վերջավորում- թյունները բուն հրամայականով խոնարհվելիս գրաբարում, միջին հայերենում և արևմտահայերենում՝

գրաբար		միջին հայերեն		արևմտահայերեն	
եզ. թիվ	հոգ. թիվ	եզ. թիվ	հոգ. թիվ	եզ. թիվ	հոգ. թիվ
- n	-է՛ք	- n /n՝ iր	-է՛ք	-n iր	-է՛ք

Պատճառական բայերի բուն հրամայականով խոնարհման համակարգի դիտարկումը, բերված բնագրային օրինակները փաստական նյութ են ևս մեկ անգամ ընդգծելու արևմտահայերենի և միջին հայերենի լեզվական համակարգերի ընդհանրությունները։ Միջին հայերենի բայական համակարգն իր հիմնական գծերով փոխանցվել է արևմտահայերենին, և այս առումով կարող ենք ասել, որ արևմտահայերենը միջին հայերենի անմիջական ժառանգորդն է ու շարունակողը։

Գրականություն

1. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2004:
4. Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002:
5. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

Համառոտագրություններ

ԱԾՄ – Ապրող ծառ մը
 ԱՀ - Ա. Հայկազ
 ԳՀ – Գիրք հաստատութեան և արմատ հավատոյ
 ԳՊ – Գրիգոր Պըլտեան
 ԵԼԺ - Երկերու լիակատար ժողովածու
 ԿԵ - Կոստանդին Երզնկացի
 ՀԲ - Հայրեններու բուրաստանը
 Մանտր. - Մանտրաներ
 ՄՀ- Մխիթար Հերացի
 ՄՊ – Մովսես Պաքճեան
 ՆՀՏ – Նաղաշ Հովնաթան, Տաղեր
 ՋՄ – Ջերմանց Մխիթարութիւն
 ՎԱ – Վարդան Այգեկցի

ՔԲ – Քրիստիան Բատիկեան

ՖԺ – Ֆրիկ, Ժողովածու

Աղբյուրներ

Այգեկցի Վ., Գիրք հաստատության եւ արմատ հաւատոյ, Ե., 1998:

Երզնկացի Կ., Տաղեր, Ե., 1962:

Հայկազ Ա., Ապրող ծառ մը, Ե., 2012:

«Հայրեններ, անտունիներ», Վ., 1997:

«Հայրեններու բուրաստանը», Փ., 1940:

Հերացի Մ., Ջերմանց Մխիթարութիւն, Վ., 1832:

Հովնաթան Ն., Տաղեր, Ե., 1983:

Պըլտեան Գ., Մանտրաներ, Ե., 2010

Պչաքճեան Մ., Երկերու լիակատար ժողովածու, հ. 3, Ե., 2013:

Ֆրիկ, Ժողովածու, Ե., 1937:

digilib.aua.am

granish.org

www.aztagdaily.com

www.grakantert.am

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական
խորհրդի անդամ, Բ.Գ.Թ. Հ.Ս.Ղազարյանը: